ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2016թ. նոյեմբերի 3 N 128-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով , Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի առաջարկությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում կառավարման խորհուրդների կազմը հաստատելու մասին>> N 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Թալինի տարածաշրջանի 19-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) <<Թալինի Մելանթոն Արսլանյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի կազմում <<Հայկ Դիլանյան>> բառերը փոխարինել << Մամիկոն Աբգարյան>> բառերով:

Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆ